Armenian

COOKIE ՖԱՅԼԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
Վերջին թարմացման ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 22.03.2024 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

1. Ընդհանուր դրույթներ
2. Cookie ֆայլերը և դրանց տեսակները
3. Cookie ֆայլերի օգտագործումը և դրանց նպատակը
4. Cookie ֆայլերի կառավարումը
5. Cookie ֆայլերի արգելափակումը
6. Cookie ֆայլերի ջնջումը
7. Cookie ֆայլերի օգտագործման մասին համաձայնություն
8. Փոփոխություններ սույն Քաղաքականության մեջ
9. Կոնտակտային տեղեկատվություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«TUFENKIAN HOSPITALITY» ՍՊԸ-ն, ստեղծված համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և գրանցված **Հայաստան, Ք. Երևան, Հանրապետության, 48**, **+37493102101, admin@tufenkian.am** հասցեով, («վեր կայք», «մենք», «մեր» կամ «մեզ») օգտագործում է cookie ֆայլերը տվյալ վեբկայքում:

Այս վեբկայքը այցելելիս՝ մենք կարող ենք Ձեր սարքի վրա տեղադրել cookie ֆայլեր և նմանատիպ այլ տեխնոլոգիաներ՝ Ձեր cookie ֆայլերի կարգավորումներին համապատասխան: Կախված Ձեր cookie ֆայլերի կարգավորումներից՝ cookie-ների կամ համանման տեխնոլոգիաների միջոցով կարող է հավաքվել հետևյալ տեղեկատվությունը՝ Ձեր սարքի եզակի նույնացուցիչը, սարքի IP հասցեն, տեղեկատվություն Ձեր սարքի օպերացիոն համակարգի, բջջային կապի օպերատորի և Ձեր գտնվելու վայրի մասին (այնքանով, որքանով դա թույլատրվում է տվյալների պաշտպանության գործող օրենսդրությամբ): Այցելելով այս վեբկայք՝ Դուք համաձայնում եք cookie ֆայլերի օգտագործմանը, ինչպես նկարագրված է cookie ֆայլերի օգտագործման սույն քաղաքականության մեջ (այսուհետ՝ «Քաղաքականություն»):

2. COOKIE ՖԱՅԼԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Cookie-ները փոքր տեքստային ֆայլեր են, որոնք վեբկայքն ուղարկում և պահում է Ձեր վեբ բրաուզերում՝ տվյալ կայք այցելելիս: Դրանք եզակի են Ձեր հաշվի կամ բրաուզերի համար: «Cookie ֆայլերի կառավարումը» բաժինը բացատրում է, թե ինչպես փոխել Ձեր նախապատվությունները Cookie ֆայլերի առնչությամբ: Կարևոր է հիշել, որ Cookie-

ների և նմանատիպ տեխնոլոգիաների ամբողջական անջատումը կարող է խաթարել Ձեր՝ որպես օգտատիրոջ փորձառությունը կայքում և սահմանափակել որոշ գործառույթների ֆունկցիոնալությունը:

- **Սեսիոն cookie ֆայլերը** գործում են, քանի դեռ բաց է Ձեր բրաուզերը և ավտոմատ կերպով ջնջվում են, երբ Դուք փակում եք բրաուզերը:
- **Մշտական cookie ֆայլերը** գործում են, քանի դեռ Դուք կամ Ձեր բրաուզերը չեք ջնջել դրանք, կամ քանի դեռ չի լրացել դրանց գործողության ժամկետը:

Տվյալ cookie ֆայլերը կարելի է դասակարգել նաև որպես առաջին կողմի և երրորդ կողմի cookie ֆայլեր:

- Առաջին կողմի cookie ֆայլերը ստեղծվում և Ձեր սարքում տեղադրվում են այն վեբկայքի կողմից, որն այցելում եք: Դրանք սովորաբար կիրառվում են օգտատիրոջ փորձը բարելավելու և կայքի որոշ հիմնական գործառույթները ապահովելու համար:
- Երրորդ կողմի cookie ֆայլերը օգտագործման ընթացքում ստեղծվում և տեղադրվում են Ձեր սարքում Ձեր այցելած կայքերից տարբերվող այլ կայքերից: Այս cookie ֆայլերը ստեղծվում են, երբ այցելում եք կայք, որը ներառում է տարրեր այլ կայքերից, օրինակ՝ երրորդ կողմի պատկերներ կամ գովազդ:

Ինքնին cookie ֆայլերը Ձեզ չեն նույնականացնում: Դրանք նույնականացնում են Ձեր վեբ բրաուզերը:

Մենք օգտագործում ենք cookie ֆայլերը հետևյալ նպատակներով.

1. վեբկայքի պատշաճ աշխատանքը ապահովելու համար,
2. բարելավելու համար վեբկայքը՝ հիմնվելով այն բանի վրա, թե ինչպես եք հասել դրան և ինչ սարքեր եք օգտագործում:

Մեր կայքի cookie ֆայլերը հիմնականում դասակարգվում են հետևյալ կատեգորիաների.

- **Խիստ անհրաժեշտ cookie ֆայլեր:** Այս cookie ֆայլերը և այլ տեխնոլոգիաները անհրաժեշտ են մեր կայքերի պատշաճ ֆունկցիոնալությունը ապահովելու և Ձեր հարցումները կատարելու համար: Առանց դրանց մենք չենք կարողանա ապահովել կայքի աշխատանքը: Նրանք աջակցում են կայքի հիմնական գործառույթներին և հարակից ծառայություններին: Այս cookie ֆայլերը ժամանակավոր են և ջնջվում են, երբ փակում եք Ձեր բրաուզերը:
- **Կատարողականի cookie ֆայլեր:** Նրանք թույլ են տալիս մեզ ճանաչել և հաշվել մեր կայքերի օգտատերերի թիվը, ինչպես նաև հետևել նրանց նավիգացիային: Սա օգնում է մեզ բարելավել մեր կայքերի աշխատանքը, օրինակ՝ օգտատերերի համար ապահովել հեշտ հասանելիություն անհրաժեշտ տեղեկատվությանը: Այս cookie ֆայլերը ժամանակավոր են և ջնջվում են, երբ փակում եք Ձեր բրաուզերը:
- **Ֆունկցիոնալ cookie ֆայլեր:** Դրանք բարելավում են մեր կայքերի ֆունկցիոնալությունը և առավել հարմարավետ դարձնում դրանց

օգտագործումը: Օրինակ՝ այս cookie ֆայլերը հիշում են Ձեր նախորդ այցելությունները և պահում կարգավորումները ավտոմատ մուտքի համար: Այս cookie ֆայլերը ժամանակավոր են և ջնջվում են, երբ փակում եք Ձեր բրաուզերը:

- **Նպատակային cookie ֆայլեր:** Նրանք գրանցում են մեր կայքեր Ձեր այցելությունները, հետևում են դիտվող էջերին և հղումներին՝ Ձեզ որպես կրկնվող այցելու ճանաչելու և մեր և այլ վեբկայքերում Ձեր ակտիվությանը հետևելու համար: Այս cookie ֆայլերը համարվում են մշտական, քանի որ դրանք մնում են Ձեր սարքում և օգտագործվում են մեր կայքեր հետագա այցելությունների ժամանակ: Դուք կարող եք ջնջել այս cookie ֆայլերը Ձեր բրաուզերի կարգավորումներից:

3. COOKIE ՖԱՅԼԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՒ ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԸ

Մենք օգտագործում ենք cookie ֆայլերը մեր միջազգային ծառայությունների մատուցման հետ կապված տարբեր նպատակների համար, որոնք ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

- **Պարտադիր cookie ֆայլեր:** Այս cookie ֆայլերը կարևոր են կայքի ֆունկցիոնալության համար: Նրանք թույլ են տալիս նավարկել կայքում և օգտագործել դրա հնարավորությունները:
- **Անալիտիկ և կատարողականի cookie ֆայլեր:** Մենք օգտագործում ենք այս cookie ֆայլերը՝ տեղեկություններ հավաքելու այն մասին, թե ինչպես են այցելուներն օգտագործում վեբկայքը: Սա օգնում է մեզ բարելավել դրա ֆունկցիոնալությունը և արդյունավետությունը:
- **Նախընտրությունների cookie ֆայլեր:** Այս cookie ֆայլերը մեզ թույլ են տալիս հիշել Ձեր նախընտրությունները և կարգավորումները, ինչպիսին է լեզուն, ինչպես նաև տրամադրել ընդլայնված, ավելի անհատականացված գործառույթներ:
- **Գովազդային cookie ֆայլեր:** Մենք աշխատում ենք երրորդ կողմի գովազդային գործընկերների հետ, ովքեր կարող են օգտագործել cookie ֆայլեր՝ Ձեր հետաքրքրություններին հարմարեցված անհատականացված գովազդային հայտարարություններ ուղարկելու համար:

4. COOKIE ՖԱՅԼԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Գոյություն ունեն cookie ֆայլերի կառավարման և դրանց կարգավորումների մի քանի եղանակներ: Այնուամենայնիվ, եթե Դուք մերժեք բոլոր ոչ էական cookie ֆայլերը, դա կարող է հանգեցնել անհարմարությունների և սահմանափակել Ձեզ հասանելի գործառույթները: Օրինակ՝ մենք չենք կարողանա պահպանել Ձեր որոնումները կամ ճանաչել Ձեր համակարգիչը, ինչի հետևանքով Դուք ստիպված կլինեք համակարգ մուտք գործել ամեն անգամ, երբ այցելում եք մեր կայքերը: Խնդրում ենք նկատի

ունենալ, որ խիստ անհրաժեշտ cookie ֆայլերը, որոնք կարևոր են մեր կայքերի աշխատանքի համար, չեն կարող մերժվել:

- **Բրաուզերի կարգավորումներ:** Ձեր բրաուզերը կարող է գործիքներ տրամադրել cookie ֆայլերը կառավարելու համար: Կառավարման մեթոդը կախված է կոնկրետ բրաուզերի և cookie ֆայլերի տեսակից: Որոշ բրաուզերներ առաջարկում են «Չհետևել» գործառույթը, որը ցույց է տալիս, որ Դուք չեք ցանկանում, որ հետևեն Ձեր՝ Ինտերնետում գործողություններին: Այնուամենայնիվ, այս գործառույթները դեռ ստանդարտացված չեն, ուստի մենք ներկայումս դրանք չենք աջակցում:
- **Հետաքրքրությունների վրա հիմնված առցանց գովազդի վերահսկում:** Մենք համագործակցում ենք առցանց գովազդի մատակարարների հետ, որպեսզի ցուցադրենք համապատասխան և օգտակար գովազդային հրապարակումներ ինչպես մեր կայքում, այնպես էլ այլ ռեսուրսներում: Այս գովազդները կարող են հիմնված լինել մեր կամ երրորդ անձանց կողմից հավաքագրված տվյալների վրա, ինչպիսիք են Ձեր փոստային կոդը կամ Ձեր գործողությունները մեր կայքերում և այլ վեբկայքերում:

Cookie ֆայլերի (մշտական, անալիտիկ և գովազդային) կառավարման համար մուտք գործեք Ձեր բրաուզերի կարգավորումներ:

Եթե ցանկանում եք ջնջել Ձեր այցելած վեբկայքերում տեղադրված բոլոր cookie ֆայլերը, կարող եք անդրադառնալ սույն Քաղաքականության 6-րդ բաժնին: Խնդրում ենք նկատի ունենալ, որ բոլոր cookie ֆայլերի ջնջումը կարող է չազդել cookie ֆայլերի որոշ այլ տեսակների վրա: Նաև, խնդրում ենք հաշվի առնել, որ cookie ֆայլերը կարող են ջնջվել, նոր համակարգիչ գնելիս, բրաուզերը տեղադրելիս կամ թարմացնելիս կամ վերջինիս կարգավորումները փոփոխելիս:

5. COOKIE ՖԱՅԼԵՐԻ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄԸ

Շատ ինտերնետ բրաուզերներ առաջարկում են cookie ֆայլերի օգտագործումից հրաժարվելու հնարավորություն: Դուք կարող եք ուսումնասիրել հետևյալ հղումները, որպեսզի ավելի լավ հասկանաք, թե ինչպես կառավարել cookie ֆայլերը Ձեր վեբ բրաուզերում: Խնդրում ենք հիշել, որ cookie ֆայլերը անջատելը ազդում է ոչ միայն տվյալ վեբկայքի, այլև Ձեր այցելած մյուս կայքերի վրա:

- Internet Explorer - Դիտեք այստեղ:
- Chrome - Դիտեք այստեղ:
- Firefox - Դիտեք այստեղ:
- Safari - Դիտեք այստեղ:
- Opera - Դիտեք այստեղ:
- IPhone, iPad and other equipment from Apple - Դիտեք այստեղ:
- Android phones and other equipment - Դիտեք այստեղ:
- Google cookies Opt-out -Դիտեք այստեղ:
- Third Party vendor’s use of cookies Opt-out - Դիտեք այստեղ:

- Google Analytics Opt-out -Դիտեք այստեղ:

Կարևոր է նշել, որ cookie ֆայլերի արգելափակումը կարող է անդրադառնալ բազմաթիվ վեբկայքերի աշխատանքի վրա:

6. COOKIE ՖԱՅԼԵՐԻ ՋՆՋՈՒՄԸ

Դուք նաև հնարավորություն ունեք ջնջելու Ձեր համակարգչում պահված cookie ֆայլերը: Դա անելու համար պարզապես հետևեք Ձեր բրաուզերի հրահանգներին: Այնուամենայնիվ, խնդրում ենք նկատի ունենալ, որ cookie ֆայլերը ջնջելը կարող է բացասաբար ազդել բազմաթիվ վեբկայքերի աշխատանքի վրա: Խնդրում ենք հաշվի առնել, որ խիստ անհրաժեշտ cookie ֆայլերը, որոնք էական կարևորություն ունեն վեբկայքերի ֆունկցիոնալության համար, որպես կանոն չեն կարող ջնջվել կամ անջատվել, քանի որ դրանք պահանջվում են կայքի հիմնական աշխատանքի համար:

Cookie ֆայլերը ջնջելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք օգտվել այս ռեսուրսից. https://allaboutcookies.org/:

7. COOKIE ՖԱՅԼԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Այցելելով վեբկայք՝ Դուք համաձայնում եք cookie ֆայլերի օգտագործմանը, ինչպես նկարագրված է սույն Քաղաքականության մեջ: Եթե համաձայն չեք cookie ֆայլերի օգտագործմանը, խնդրում ենք անջատել դրանք Ձեր բրաուզերի կարգավորումներում կամ չայցելել այս վեբկայք:

8. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մենք կարող ենք պարբերաբար թարմացնել սույն Քաղաքականությունը: Ցանկացած փոփոխություն կհարապարակվի այս էջում, և «Ուժի մեջ մտնելու ամսաթիվը» կթարմացվի:

Եթե մենք սույն Քաղաքականության մեջ կատարենք այնպիսի փոփոխություններ, որոնք էականորեն կազդեն Ձեր անձնական տվյալների մշակման վրա, մենք այդ մասին Ձեզ կծանուցենք մեր կայքում կամ ինչպես պահանջվում է տվյալների պաշտպանության մասին օրենսդրությամբ: Շարունակելով օգտվել այս վեբկայքից և մեր ծառայություններից և չհամաձայնվելով կամ հրաժարվելով դրանցից՝ Դուք արտահայտում եք Ձեր համաձայնությունը փոփոխություններին:

Մենք խորհուրդ ենք տալիս պարբերաբար վերանայել մեր Քաղաքականության ընթացիկ տարբերակը այս էջում, որպեսզի տեղեկացված լինեք, թե ինչպես ենք մենք պաշտպանում Ձեր անձնական տվյալները: Դուք ընդունում և համաձայնում եք, որ Ձեր պարտականությունն է պարբերաբար վերանայել այս Քաղաքականությունը և ծանոթանալ վերջինիս փոփոխություններին:

9. ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«TUFENKIAN HOSPITALITY» ՍՊԸ-ն, **Հայաստան, Ք. Երևան, Հանրապետության, 48**, **+37493102101, admin@tufenkian.am** հանդիսանում է Ձեր անձնական տվյալների Վերահսկիչը՝ տվյալների պաշտպանության գործող օրենսդրությանը համապատասխան: Եթե ունեք հարցեր այս Քաղաքականության վերաբերյալ կամ ցանկանում եք օգտվել Ձեր իրավունքներից, խնդրում ենք կապվել մեզ հետ:

Այցելելով այս վեբկայք՝ Դուք հաստատում եք, որ կարդացել եք, հասկացել և համաձայն եք մեր Քաղաքականությանը: